ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 7, 1962 Общественные науки

Լ. Ա. Բարսեղյան, Ժ. Դ. Խաչատրյան

ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՐԿՈՒ ԱՄՐՈՑՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1960—1961 թթ. Հայկական ՍՍՌ Նոյեմբերյանի շրջանում հնագիտական-հետախուզական շրջագայությունների ժամանակ մեր ուշադրության առարկան հանդիսացան միջնադարյան երեք հուշարձաններ, որոնք պատմահնագիտական և ճարտարապետական առումով դեռևս ուսումնասիրված չեն և փաստորեն քիչ են ծանոթ հայագիտությանը։

Այդ ամրոցներից մեկը գտնվում է Ղալաշա գյուղի հարավ-արևելյան ծայրում, իսկ մյուսները՝ Կոթի գյուղից հարավ, Ադրբեջանական ՍՍՌ-ի սահմանի վրա։ Նրանց մասին տեղեկություններ հիմնականում հաղորդում են վրաց աղբյուրները։

Վրաց, ինչպես և մասամբ հայկական աղբյուրներում այդ ամրոցները հայտնի են Գագ, Քավազին (Գավազան, Քոզին, Գավազն) և Ղալինջաքար (Խալինճքար) անուններով։ Վերոհիշյալ հուշարձաններից հատկապես Գագի և Ղալինջաքարի հիշտ տեղադրումը դեռևս պարզված չէր։ Մեր ձեռքի տակ եղած նյութերն առայժմ հնարավորություն են ընձեռում պատմա-աշխարհագրական որոշ դիտողություններ անել միայն Գավազան և Ղալինջաքար ամրոցների պատմության ու նրանց տեղադրման հարցի շուրջը։

Ինչպես հայտնի է, Հայաստանի հյուսիսը, որտեղ և գտնվում է Նոյեմբերյանի շրջանը, ընդգրկում էր պատմական Գուգարք նահանգը։

Այս հուշարձանները, որոնք իրենց ճարտարապետական հատկանիշներով որոշակիորեն օգնում են թվագրմանը, հավանաբար կառուցվել են Տաշիր-Զորագետի կամ Կյուրիկյան Դավիթ Անհողին թագավորի օրոք (989—1048 թթ.), երբ վերջինս ընդարձակեց իր թագավորության սահմանները դեպի հյուսիս և արևելք, սահմանակից դառնալով Գանձակի էմիրությանը։

Այդպիսի զորեղ հարևանի առկայությունը բնականաբար պահանջում էր պաշտպանական միջոցներ ձեռնարկել, որին և ձեռնամուխ եղան Հայաստանի այդ շրջանի տերերը։ Արդյունքը եղավ այն, որ շուտով այստեղ վեր խոյացան պաշտպանական այնպիսի կառույցներ, ինչպիսիք էին Կայեն Կայծոն, Նոր Բերդ, Տերունական, Տավուշ, Մահկանաբերդ, Գավազան և Ղալինջաքար ամրոցները։

1118 թ. հյուսիսային Հայաստանի, այդ թվում և Տաշիր-Զորագետի թագավորության հիմնական մասը միացվեց վրաց հզորացող թագավորությանն ու հաղորդակից դարձավ նրա տնտեսական և կուլտուրական վերելքին։

12-րդ դարի վերջերից այստեղ հաստատվեցին Զաքարյանները, որոնց ժամանակ երկիրը վայելելով վրաց պետության հովանավորությունը, նոր տնտեսական-կուլտուրական, մասամբ և քաղաքական վերելք ապրեց։ Գավազան և Ղալինջաքար ամրոցներն էլ գտնվելով այդ տերիտորիայում հեռու չէին կարող մնալ տնտեսական ու քաղաքական այս կարևոր անց ու դարձերից։

Ղալինջաքար ամրոցի մասին միակ գրավոր վկայությունը հաղորդում է 12-րդ դարի մի վրաց անանուն հեղինակ իր «Դավիթ արքայից արքայի պատմությունը» երկում, որին կրկնում են վրացի պատմիչներից Ջուանշերը և Վախուշտի Բագրատիոն արքայազնը։ Այս հիշատակությունների մեջ ամրոցը հանդես է գալիս Ղալինջաքար, Խալինճքար (Խալինջաքար) անուններով, կապված վրաց Դավիթ Շինարար թագավորի կողմից սելջուկների դեմ մղած պատերազմների հետ։

1123 թ. գարնանը վրաց Դավիթ Շինարար թագավորը մի արշավանք է ձեռնարկում Շիրվանի սելջուկյան սուլթանի դեմ և գրավում է Շամախին։ Միաժամանակ նա ազատագրում է սելջուկներից Գուգարքից դեպի Աղստեֆի հովիտն ընկած շրջանները, գրավում է Գագա դաշտը համանուն ամրոց-բերդով և Տերունական, Նոր բերդ, Կայեն, Կայծոն, Մահկանաբերդ, Մանասգոմ, Գավազան, Խալինճաքար, Տավուշ ամրոցները։



Ղալինջարար ամրոցը հարավային կողմից

Վրաց աղբյուրները այս արշավանքի մասին պատմում են. «Եվ սավառնելով իբրև արծիվ՝ (Դավիթ թագավորը նույն թվի) մայիսին վերցրեց Հայքի (Սոմխիթի) բերդերը՝ Գագք [Գագ(եր)ը], Տերունականը (Տերունակալը), Քավազինները, Նոր[ա]բե[ր]դը, Մանիցգոմերը (Մանասգոմերը) և Ղալինջաքարը (Խալինջաքարը)»[1]։ Ղալինջաքարի մասին մյուս աղբյուրները լռում են։ Ղալինջաքար ամրոցը մենք նույնացնում ենք Նոյեմբերյանի շրջանի Ղալաչա գյուղի հարավ-արևելյան ծայրում, մի մեծ բլրի վրա դտնվող ամրոցի հետ, առա-

1 Լ. Մելիքսեթ-Բեկ, Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, Երևան, 1934, հ. 1-ին, էջ 218։ Նույնը, Երևան, 1955, հ. 3-րդ, էջ 42, «...նա (Դավիթ Շինարարը) էառ և զդղեակսն Հայոց՝ զԴմանիս, զԳագ, զՏերունականն, զՔաւազինն, զնոր-Բերդն, զՄանասգոմ, զխալինճքար.....». Համառոտ պատմութիւն վրաց Ջուանշէրի պատմիչի, Վենետիկ, 1884, էջ 121-

ջին հերթին հիմք ընդունելով ամրոցի տեղադրությունը և երկու անունների նմանությունը (Ղալինջա-Ղալաշա)[2]։

Ղալինջաքարը գտնվում է Կողբաշայ գետի աջ կողմում, որը հոսում է անմիջապես հարթության վրա բարձրացած բլրի (քարի) լանջով և փաստորեն ծառայում է որպես բնական պատնեշ։ Ամրոցն ունի ձվաձև (ավելի շուտ ուղղանկյունու նմանվող) հատակագիծ և ձգվում է արևելքից արևմուտք։ Միակ մուտքը գտնվում է արևմտյան կողմում։ Շինությունը ամենայն հավանականությամբ երկհարկանի է, չնայած երկրորդ հարկի հատակը չի պահպանվել։

Գավազանի ընդհանուր տեսքը

Ամրոցի որոշ տեղերում, սկզբնական շինությանը մոտ պահպանված բարձր պատերի մեջ հավասար բարձրության վրա պարզորոշ երևում են գերանների համար փորված անցքերը՝ փայտային մնացորդներով։ Ամրոցն ունի երկու մեծ և յոթ փոքր շրջանաձև աշտարակներ, որոնց մի մասը կիսաքանդ վիճակում են, իսկ մի քանիսը կանգուն են սկզբնական շինությանը մոտ բարձրությամբ։ Ամրոցի արևելյան պատը բաղկացած է դեպի վեր խոյացող, կողք կողքի կանգնեցված հինգ աշտարակներից։ Շինության կառուցման ժամանակ օգտագործվել է տեղական խամրած գույնի, ամուր, մշակված կրաքարը։

2 Դեռևս երեք տարի առաջ բանավոր զրույցի ժամանակ մեր կարծիքը հավանություն ստացավ պրոֆ. Ս. Տ. Երեմյանի կողմից, որը նույնպես Խալինջաքարը տեղադրում է Ղալաշայի տեղում։ Տե՛ս ՀՍՍՌ Ատլաս, Երևան, 1961, էջ 106, քարտեզ «Հայաստանը մոնղոլական նվաճումների նախօրյակին»։

Ամրոցի դիմաց ընդարձակ տարածության վրա ձգվում է գերեզմանոցը, որտեղ պահպանվել են 12—13-րդ դդ. բնորոշ խաչքարեր-մահարձաններ։ Գավազան ամրոցի մասին հաղորդվող վկայություններն ավելի շատ են, քան Ղալինջաքարինը։ Արդեն իսկ անցյալ դարի կեսերից սկսած Գավազանն իր վրա էր գրավել ուսումնասիրողների և ճանապարհորդների ուշադրությունը, որոնք իրենց հերթին տվել են նրա նկարագրությունը։

Գավազան ամրոցը, որը տեղացիներին մինչև այժմ էլ հայտնի է Գավարզին կամ Գվարզին անուններով, տեղադրվում է Աղստև գետի արևմտյան կողմում, Ադրբեջանական ՍՍՌ Ղազախ քաղաքից 20 կմ դեպի հյուսիս-արևմուտք համանուն բարձրության հյուսիս-արևելյան լանջին։



Գավազան ամրոցաբաղաքի միջնարկրդի հատակագիծը

Պատմական Գագա գաշտի ծայրին գտնվող այս ամրոցի համառոտ նկարագրությունը առաջին անգամ տվել է Ս. Ջալալյանցը[3]։ Հետագայում ամրոցի ավելի մանրամասն նկարագրության փորձ է կատարել Մ. եպ. Բարխուդարյանցը, ըստ որի ամրոցը գտնվում է. «...մի բարձր, միապաղաղ, գորշագույն, զարմանալի և միանգամայն ահարկու ժայռի» արևելյան ստորոտին, որի սենյակներից մեկում ջրհոր կա, իսկ «...ժայռիս գագաթն բարձրանալու համար կայ միայն մի դժուարատար, սոսկալի, նեղ շափազանց զառիվեր, և միանգամայն վտանգաւոր կածան հիւսիսային կողմից» որ «...Ժայռիս արևմտեան կողմում բաւական բարձր երևում է մի մեծ ծակ, որի ետև, ասում են կայ մեծագոյն քարայր, որի ճանապարհն անհայտացած է այժմ։ Երբեմն երբեմն արծիւներն այրիցս հանում են գորգի և կարպետի փտած կտորներ և ձգում վար»[4]։

---

3 «Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան», աշխատասիրությամբ Սարգիս վարդապետի Ջալալեանց, Տփխիս, 1842, մասն Ա, էջ 156։

4 Մ ա կ ա ր ն պ ի ս կ. Բ ա ր խ ո ւ տ ա ր ե ա ն ց, Արցախ, Բաքու, 1895, էջ 395, տե՛ս նաև Հ. Ս. Է փ ր ի կ ե ա ն, Պատկերազարդ բնաշխարհիկ բառարան, հ. 1, Վենետիկ, 1909, էջ 500, որը նշում է նաև, որ «...հոս կայ ընդարձակ հանգստարան և աւերակ եկեղեցի»։ Մենք ուշադիր կերպով զննեցինք տեղանքը, սակայն չհաջողվեց հայտնաբերել դրանք, գուցե այն շփոթել է Գագ բերդի գերեզմանոցի և եկեղեցու հետ, և կամ ծածկվել են հողի տակ։

Գավազան ամրոցը, որն ամենայն հավանականությամբ հիմնադրված է դեռևս 10-րդ դարում կամ 11-րդ դարի սկզբներին, առաջին անգամ հիշատակվում է 11-րդ դարի 60-ական թվականների վերջերին, Քոզին (Քաուին) անունով, կապված սելջուկյան Ալփասլանի սուլթանության վերջին տարիների (մահացել է 1072 թ.) դեպքերի հետ։

Աղբյուրները վկայում են, որ Արխազաց և վրաց Բագրատ 4-րդ թագավորն հարձակվեց Տփխիսի վրա, որն Ալփասլանը տվել էր Գանձակի Փատլուն ամիրային։ Վերջինս պարտվում և գերվում է Լիպարիտի որդի՝ Իվանե Օրբելյանի զորքերի կողմից և միայն Տփխիսը, Գագա բերդն ու Գավազին ամրոցը տալով Բագրատին ազատվում է։

«...Եւ ոմն ծանուցեալ զնա՝ ասէ. դու իսկ ես ամիրայն ամիրայց Փատլուն։ Եւ զոչեաց ձայնիւ մեծաւ, և հնչեաց երկիրն, և ձայն տուեալ միմեանց՝ ըմբոնեցին զնա բնակիչք գաւառին, և տարան առ Բագրատ և էառ ի նմանէ զՏփխիս և զԳագ և զՔօզինն՝ զոր առեալ էին պարսք ի Հայոց և ի Վրաց...»[5]։

Գավազանն, այնուհետև հիշատակվում է 1123 թ. Դավիթ Շինարարի պատերազմների կապակցությամբ, որի մասին արդեն վերը նշեցինք, երբ Ղալինջաքարի և մյուս ամրոցների հետ միասին ազատագրվում է նաև Գավազանը։

Գավազան ամրոցի հետագա բախտի մասին մեզ տեղեկություններ է տալիս Վարդան վարդապետը, մոնղոլական ավերիչ արշավանքները նկարագրելիս։ Նա պատմում է, որ մոնղոլները՝ Մոլոր Նոյինի գլխավորությամբ Շամխորն ավերելուց հետո առանց դժվարության և մեծ մասամբ առանց կռվի գրավեցին Վահրամ Գագեցու գավառներն ու բերդերը՝ Սագամը, Կածարեթը, Քավազինն ու Գագը և այլն։

«Իսկ Մոլար Նոյինն ի բաժնի առեալ զբերդս գաւառաց Մեծ իշխանի Վահրամայ... զնոր բերդ՝ որ էր Վասակայ թագավորազնին և զԳագ անուանի բերդ...»[6]։

Գավազան ամրոցը մինչև 15-րդ դարի 1-ին կեսը դեռևս կանգուն էր որպես ամուր բերդ և այնտեղ ապաստան էին գտնում ասպատակություններից ու կողոպուտներից խուսափած մերձակա վայրերի բնակիչները։ Այդ մասին վկայում է ոմն Հովհաննես գրիչ 1436 (հայոց ՊՁԵ) թվականին։

«...եկաք մինչև Աղստև, հանդիպեցաւ Ջաղաթին իլղարն՝ բազում հեծեալ. և թալանեցին զմեզ ու զամէն քրիստոնեայքն, և մերկեցուցին, որ քան զոտից ամանն այլ իրք չթողին, այլ ձմերան աւուրք և ցուրտ։ Այլ եկաք ի Գավազանին բերթն, քրիստոնեայքն ի վերա եկին և ծածկեցին զմեր մերկութիւնն»[7]։

Թե մինչև երբ տևեց ամրոցի կյանքը, մեզ հայտնի չէ, բայց հավանաբար այն արդեն 15-րդ դարի վերջին և 16-րդ դ. սկզբներին քանդված է եղել և միջնաբերդի պարիսպներին դրսի կողմից հենված բազմաթիվ բնակարաններ են կառուցվել։

Ամրոցը կառուցված է դաշտի մեջ մոտ 400 մ բարձրությամբ վեր խոյացող մի առանձին գորշավուն ժայռաբլրի վրա, որը կարծես իշխում է ողջ հարթության վրա։ Ժայռաբլուրը միայն մի կողմից թեք լանջ ունի, որտեղ և կառուցվել է ամրոցը, իսկ երեք կողմերից գրեթե ողորկ, ուղղահայաց ժայռ է։

5 Ջուանշիր... էջ 114։ Լ. Մելիքսեթ-բեկ, Վրաց աղբյուրներ..., հ. 1, էջ 208։

6 «Հաւաքումն պատմութեան Վարդանայ վարդապետի», Վենետիկ, 1862, էջ 145։

7 Լ. Խաչիկյան, ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Երևան, 1955, հ. Ա, էջ 461։

Այժմ ամրոցից պահպանվել են միջնաբերդի պատերը, իսկ նրանցից դեպի ներքև 400 մ դեպի հյուսիս հարթության վրա փռված է եղել բերդաքաղաքը, որի պարսպի հիմքերը պարզ նկատելի են։ Բերդաքաղաքը գրավում է շուրջ 10 հեկտար տարածություն։ Միջնաբերդի երկարությունն է 140 մ, լայնությունը՝ 40 մ։ Միջնաբերդի պատերը կառուցված են մշակված ոչ խոշոր դեղնավուն կրաքարից, իսկ բերդաքաղաքի պարիսպների մեջ օգտագործվել են նաև անտաշ խոշոր որձաքարեր, որպիսիք կային նաև երևացող բնակարանների շինությունների հիմքում, բերդաքաղաքի պարսպից դուրս։

Միջնաբերդի հյուսիսային պատը փաստորեն բարձունքի ժայռոտ պատվարն է, որի կողմերին տարբեր բարձրության վրա կարծես կառչել են զանազան մեծության պատեր, ստեղծելով հարթություններ (դարավանդներ), որոնք օգտագործվել են զանազան կարիքների համար, իսկ հիմնականում ծառայել են որպես հենակներ, վերևից թափվող քարերի հոսքը ներքև արգելելու համար։

Միջնաբերդից պահպանվել են կիսականգուն յոթը՝ կիսաշրջանաձև հիմքով աշտարակներ։ Պատերի բարձրությունը հասնում է 1,5—2 մ, իսկ աշտարակներինը՝ 4—7 մ։ Մուտքն արևմտյան կողմից է։ Միջնաբերդի պարսպի ներսում առանձին տեղերում պահպանվել են շենքերի պատերի մնացորդներ։ Միջնաբերդից դուրս պարիսպների տակ համարյա բոլոր կողմերում պահպանվել են բնաբականների հետքեր՝ փոսերի և քանդված պատերի ձևով, որոնք հետագայի կառուցված շենքերի մնացորդներ են։

Այսպիսով, Գավազան և Ղալինջաքար ամրոցները գտնվում էին հայկական լեռնաշխարհի հյուսիս-արևելյան հատվածում և մտնում էին այդ մասի պաշտպանության համար ստեղծված ընդհանուր պաշտպանական սիստեմի մեջ։

Հրապարակելով այս պատմա-հնագիտական թռուցիկ հետախուզական դիտողությունները, մեր նպատակն է ոչ թե քիչ թե շատ ամբողջական ձևով ներկայացնել ու ամբողջացնել Գավարզինի և Ղալինջաքարի պատմությունը, այլ սրելու ուշադրությունը նրանց վրա և դնելու նրանց ուսումնասիրության հարցը։

Բացի վերոհիշյալ հուշարձաններից պետք է ուսումնասիրվեն նաև հյուսիսային Հայաստանում (Նոյեմբերյանի, Շամշադինի, Իջևանի շրջաններ) գտնվող պաշտպանական կառուցվածքները, որոնք ցավոք սրտի դեռևս անծանոթ են միջնադարյան Հայաստանի հնագիտությանը[8]։

---

8 Առաջարկվող հուշարձանները կարող են լինել Տերունականը, Մահկանարերդը, Գագրկայենը, Նորաբերդը, Տավուշը, Մանասգոմը, Դմանիսը և այլն։